

**Ն.Բ. ԳԱԼՍՏՅԱՆ**

**ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

Քննվում է եղեռնի թեման ամերիկացի գրողների ստեղծագործություններում, վեր են հանվում նրանց վերաբերմունքն ու բողոքն ընդդեմ մարդկության չարիքի:

**Առանցքային բաներ.** ցեղասպանություն, տառապանք, հիմնախնդիր, պայքար, հոգեկան վիճակ, ականատես, կոտորած, հիշատակ, գերտերություններ, ամերիկացի գրողներ:

Եղեռնի թեման համաշխարհային գրականության առավել ուշագրավ և արդիական թեմաներից է: Տարբեր ազգությունների հարյուրավոր առաջադեմ հասարակական գործիչներ, գիտնականներ և գրողներ շարունակ բարձրաձայնում են ցեղասպանության, մասնավորապես՝ Հայոց եղեռնի հիմնախնդիրը՝ կանխելու աշխարհի հրեշավոր չարիքը: Ամերիկյան գրականության մեջ այն մեծ հնչեղություն է ձեռք բերել՝ շնորհիվ եղեռնից մազապուրծ հայ գաղթականների, որոնք իրենց հետ Ամերիկա են տարել իրենց ցավը, վիշտը, ապրելու անկոտրում ոգին, ազգային վարքն ու բարքը, մշակույթը: Ամերիկացի գրողներից շատերը՝ Էռնեստ Հեմինգուեյը («Ջոնոնիայի ափին» և «Կիլիմանջարոյի ձյունները»), Հենրի Միլլերը («Մարուսիի արձանը»), Ջոն Դոս Պասոսը («Արևելյան ճեպընթաց») և Կուրտ Վոնեգուտը («Կապտամորուքը»), իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հայոց եղեռնի թեմային: Է. Հեմինգուեյը, իր «Ջոնոնիայի ափին» և «Կիլիմանջարոյի ձյունները» պատմվածքներում գրում է Մուստաֆա Քեմալի կողմից իրականացված կոտորածների մասին: Պարզվում է, որ աշխարհահռչակ գրողը 1923 թ. այցելել էր Ջոնոնիա և դարձել հայերի նկատմամբ իրագործված բռնարարների ականատեսը: Հեմինգուեյը տեսել էր այն աննկարագրելի տառապանքները և կոտանքները, որոնց ենթարկվել էին հազարավոր հայեր (այդ ամենը ցնցել էր մեծ գրողին): Այս առնչությամբ նա մի անգամ ասել է. «Ես հասկացա, թե պատերազմն ի՞նչ բան է միայն այստեղ՝ Մերձավոր Արևելքում» [1, 158]: Ջոնոնիա այցելելուց 30 տարի անց Հեմինգուեյը գրել է հետևյալը. «Ես հիշում եմ, որ երբ տուն վերադարձա Մերձավոր Արևելքից, կատարելապես հուզված էի: Երբ եկա Փարիզ, շարունակ երկմտում էի՝ արդյո՞ք շարունակեմ գրողի իմ գործունեությունը, թե՞ պայքար սկսեմ մարդկային ոճրի դեմ: Ի վերջո, ես որոշեցի գրել, բայց գրել միայն ճշմարտությունը» [1, էջ 158]: Հեմինգուեյը Հայոց եղեռնը համարում է համամարդկային խնդիր, որի լուծմանը հետամուտ լինելը յուրաքանչյուր քաղաքակիրթ մարդու բարոյական պարտքն է: Ամերիկացի

արձակագրի վերաբերմունքը Հայոց ցեղասպանության խնդրի նկատմամբ արտացոլված է հանրահայտ «Կիլիմանջարոյի ձյունները» պատմվածքում. «Քիչ հետո նա տեսավ այնպիսի բաներ, ինչի մասին ինքը չէր կարողանում նույնիսկ մտածել: Այնուհետև նա էլ ավելի սարսափելի տեսարաններ տեսավ: Վերադառնալով Փարիզ՝ նա չէր կարողանում ո՛չ պատմել, ո՛չ էլ ակնարկել իր տեսածի մասին» [2, էջ 164]:

Այս նույն իրավիճակում է հայտնվել վիպասան Հենրի Միլլերը: Վերջինս էռնեստ Հեմինգուեյի պես դարձել էր թուրք ազգայնամուլների՝ Ջմյուննիայում կատարած ոճրագործությունների ականատեսը: Հայոց կոտորածների ազդեցության ներքո Հենրի Միլլերն ստեղծում է «Մարուսիի արձանը» վեպը: Գրողը Հայոց ցեղասպանությունն ակնհայտորեն դիտարկում է որպես բարոյականի և ամենայն մարդկայինի ոչնչացում. «...հազարավոր անմեղ տղամարդիկ, կանայք և երեխաներ կենդանիների պես քշվեցին ծովը, նրանք գնդակահարվեցին, խեղանդամվեցին, ողջ-ողջ հրկիզվեցին, նրանց ձեռքերը կտրում էին, երբ նրանք փորձում էին մազլցել օտարերկրյա նավի վրա: Ես կարծում եմ, որ այս բարբարոսությունը նախազգուշացումն էր այն ամենի, ինչ ես պետք է տեսնեի ֆրանսիական քաղաքներում, ամեն անգամ երբ կինոխրոնիկայով ցուցադրում էին չինական քաղաքի ոմբակոծությունը» [1, էջ 159]: Միլլերը չի մոռանում նշել նաև այն կարևոր իրողությունը, որ գերտերությունների զորամիավորումներն ականատես էին վերը ներկայացված վայրագություններին, սակայն անտարբեր դիտորդի դիրք էին բռնել: Դժվար չէ նկատել, որ Միլլերը կարողացել է տալ ցեղասպանության առավել ամբողջական գնահատականը: Ի տարբերություն էռնեստ Հեմինգուեյի՝ նրան հաջողվել է ուղղակիորեն ցույց տալ Հայոց եղեռնի և XX դարի մյուս լայնամասշտաբ ոճրագործությունների փոխադարձ պատմական կապը: Ուշագրավ են նաև Միլլերի վեպի այն տողերը, որոնցով հեղինակը գերտերություններին մեղադրում է նրանց անտարբերության համար: Սրանով գրողը փորձում է առավել համակողմանիորեն վեր հանել մարդկության դեմ ուղղված հանցագործությունների արմատները: Լրացնելով Միլլերի միտքը՝ կարող ենք ասել, որ ազգասպանության ոճիրը բխում է ոչ թե մեկ պատճառից կամ գործոնից, այլ մի խումբ պատճառներից ու գործոններից: Մարդկության մի մասը մեղավոր է ցեղասպանություն կազմակերպելու ու սադրելու, մյուս մասը՝ այն իրագործելու մեջ: Սակայն պակաս վտանգավոր չեն այն մարդիկ, ովքեր կարող են խոչընդոտել ոճրագործությանը, բայց չեն անում դա: Նրանք պարզապես անտարբեր են կողքինի վշտի ու ցավի, նրա ճակատագրի հանդեպ:

Հենրի Միլլերը Հայոց եղեռնին է անդրադարձել նաև իր «Կարմիր խաչելություն» երկում, որում մի ուշագրավ միտք է արտահայտում. «Միայն վշտի և

տառապանքի պահին են մարդիկ մեկ բռունցք դառնում» [1, էջ 159]: Անկասկած, ամերիկացի գրողի խոսքերի մեջ որոշակի ճշմարտություն կա: Հիշենք թեկուզ այն, որ Հայոց ցեղասպանության օրերին եվրոպացի և ամերիկացի դիվանագետները և ճանապարհորդները տագնապով հետևում էին ջարդերին և իրենց հնարավորությունների սահմաններում փորձում էին օգնել սպանդի ենթարկվող հայերին: Սակայն ակնհայտ է. նրանք ի զորու չէին լիովին խաթարելու երիտթուրքերի հանցավոր ծրագրերը: Դրա համար անհրաժեշտ էր գերտերությունների լուրջ միջամտությունը, ինչն անհնար էր 1914-1918 թթ. պատերազմական խառնաշփոթի և գերտերությունների ու հայ ժողովրդի շահերի անհամատեղելիության պայմաններում: Համաշխարհային պատմության ողջ ընթացքը ցույց է տալիս, որ պետությունների քաղաքական շահերը, շատ հաճախ, գերակա են բարոյական արժեքների նկատմամբ, իսկ Մերձավոր Արևելքի վերջին շրջանի արյունալի իրադարձությունները վկայում են, որ մարդկությունն իր ամբողջության մեջ դեռևս զգալի ճանապարհ պիտի անցնի իրոք քաղաքակիրթ դառնալու համար:

Հայոց ցեղասպանության թեմային է անդրադարձել նաև հանրահռչակ ամերիկացի գրող Ջոն Դոս Պասոսը իր «Արևելյան ճեպընթաց» վեպով, ուր հեղինակը ներկայացնում է թուրքահայերի եւ ռուսահայերի դեգերումները հետպատերազմյան շրջանում: Նա ճանապարհորդում է մի հայի հետ, որն ականատես է եղել, թե ինչպես են իր հորը, մորը և երեք քույրերին մորթազերծ արել Տրասիզոն քաղաքում: Լսելով այդ հայի պատմությունը՝ Դոս Պասոսը խորին վշտով և կարեկցանքով է համակվում կոտորածներին զոհ գնացած հայության նկատմամբ: Գրողը ծանր մեղադրանքներ է հղում թուրք ժողովրդին՝ նրա իրագործած հանցագործության համար: Ի պատասխան օտարազգի գրողի ներկայացրած մեղադրանքի՝ ազգությամբ թուրք մի բժիշկ հակադարձում է. «Երբ թուրք զինվորականները կորցնում են իրենց համբերությունը և սպանում են մի քանի դավաճան հայերի, դուք կոկորդով մեկ ազգասպանություն եք գոռում, բայց երբ դուք՝ հույներդ, վառում եք անպաշտպան թուրքական գյուղերը և սպանում անօգնական ու խեղճ ձկնորսներին, դուք աշխարհում «դեմոկրատիա» եք տարածում» [3, էջ 36]: Դոս Պասոսն անպատասխան չի թողնում թուրք բժշկի խոսքերը. «1920 թ. դուք՝ թուրքերդ, հարձակվեցիք Ալեքսանդրապոլսին մերձակա գյուղերի վրա, ոչնչացրեցիք դրանք, փչացրիք դաշտերում եղած բերքը, իսկ այն, ինչ հնարավոր էր տանել, տարվեց ձեր կողմից: Անգամ Չինգիզ խանը և նրա հետնորդները չէին կարող նման ավերածություններ գործել» [3, էջ 65]: «Արևելյան ճեպընթաց» վեպից մեջբերված այս երկու հատվածներում ևս եղեռնագործության երևույթը բարոյական ճշմարիտ գնահատականի է արժանացել: Դոս Պասոսը

Հենրի Միլլերի պես ցույց է տալիս, որ տարբեր ժողովուրդների դեմ կազմակերպված ցեղասպանությունները մեկ միասնական շղթա են կազմում:

Էլջին Գրոսքլոուն իր «Արարատ» վեպում (1939) պատկերում է համիդյան ջարդերը՝ Թուրքահայաստանի արևելյան շրջաններից մեկում գտնվող քաղաքներից մեկում: Նա հայոց ցեղասպանությունը ներկայացնում է օտարազգի ակաճատեսների հիշողությունների, նրանց վկայությունների հիման վրա: Այս հանգամանքն ակներևաբար ունի որոշակի միտում. մի բան է, եթե եղեռնը ներկայացնում է հայը, միանգամայն այլ բան, եթե կոտորածները պատկերում են ամերիկացին, եվրոպացին, ռուսը կամ թուրքը: Գրոսքլոունը, ի տարբերություն իր գրչընկերներից շատերի, ակներևաբար բավական լավ է տիրապետել պատմական նյութին և համոզիչ փաստերով է ներկայացրել հայոց կոտորածները, ինչը, անկասկած, շատ կարևոր է, քանզի շատ հաճախ հենց գեղարվեստական գրականության միջոցով են միլիոնավոր մարդիկ պատկերացում կազմում պատմական իրողությունների մասին: Էլջին Գրոսքլոունը կարողանում է անաչառորեն ներկայացնել հայ և թուրք ժողովուրդներին, նրանց միջև տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը և հայոց կոտորածների դրդապատճառները: Ավելորդ չէր լինի նշել, որ «Արարատ» վեպում չկա ցեղասպանության պատկերման այն լայն մասշտաբը, որն առկա է Լևոն-Ջավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկիներ և պարոններ», Մայքլ Արլեն Կրոսերի «Ուղեւորություն դեպի Արարատ» և Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» վեպերում: Այսուհանդերձ, Գրոսքլոունի «Արարատը» Հայոց եղեռնի թեմային նվիրված առավել հաջողված ստեղծագործություններից է, որի գլխավոր արժանիքն այն է, որ վեպում ցեղասպանությունը ներկայացվում է մի շարք օտարազգի հերոսների կողմից, ինչը թերևս առավել ճշմարտանման ու համոզիչ է դարձնում վեպի շարադրանքը:

Ցեղասպանությունը համանման գնահատականի է արժանացել ծագումով հույն ամերիկացի գրող Էլիա Կազանի կողմից: Կազանը խստորեն դատապարտում է ԱՄՆ-ին, որը, նրա խոսքերով, Անատոլիայի հայերի սառնասիրտ դահիճն էր [1, էջ 162]: Որքանով է ամերիկացի գրողն օբյեկտիվ, երբ հայոց կոտորածների առնչությամբ մեղադրում է ԱՄՆ-ին: Ըստ երևույթին, Կազանը խոսում է զուտ բարոյական պատասխանատվության մասին, քանզի չկան այնպիսի պատմական փաստեր, որոնք կվկայեն Միացյալ Նահանգների անմիջական մեղակցության մասին: ԱՄՆ-ին և գերտերությունների մեծ մասին կարելի է մեղադրել, որ նրանք ակտիվորեն չեն խոչընդոտել Հայոց ցեղասպանությանը: «Ամերիկա, Ամերիկա» վեպում տեղ գտած նկարագրությունները, հայոց ջարդերի վառ պատկերները երևան են բերում համընդհանուր ոճրի որոշ մանրամասներ: Ակնհայտ են գրողի համակրական, ջերմ զգացմունքները հայ ժողովրդի հանդեպ:

Ճիշտ է, հայոց ցեղասպանության թեման առանցքային տեղ չի զբաղեցնում Կազանի երկում, քանի որ այն նվիրված է ԱՄՆ գաղթած մի հույն ընտանիքի պատմությանը, բայց նույնիսկ այդ պարագայում ընթերցողը տեսնում է գրողի մտահոգ ու կարեկից վերաբերմունքը հայության նկատմամբ: «Ամերիկա, Ամերիկա» վեպի հեղինակի համար հայ և հույն ժողովուրդները կարծես մեկ միասնություն լինեն: Թե՛ հայերը և թե՛ հույները դարեր շարունակ մաքառել են օտար հարստահարիչների դեմ, նրանց ֆիզիկական գոյությունը հաճախ է սպառնալիքի տակ դրվել: Թերևս այս հանգամանքներով է պայմանավորված էլիա Կազանի սրտացավ վերաբերմունքը հայության հանդեպ:

Սառու Բելուն «Օգի Մարչի ճանապարհորդությունը» վեպում ևս անդրադարձել է հայոց ցեղասպանության թեմային: Վեպում պատկերում է մի հայ իրավաբանի, որը ներկայացնում է հարազատ ժողովրդի ողբերգական պատմությունը: Ինչպես նախորդ հեղինակները, Սառու Բելուն ցավով ու կարեկցանքով է վերաբերվում հայերին: Ուշագրավ է, որ ամերիկացի գրողը զուգահեռ է անցկացնում հայոց և հրեական ջարդերի միջև: Բելունի անցկացրած զուգահեռը միանգամայն տեղին է. ցեղասպանությունների պատմության մեջ դժվար է գտնել երկու այնպիսի եղերական դեպք, որոնք այնքան նման լինեն, ինչպես հայկականը և հրեականը: Բանն այն է, որ դրանք երկուսն էլ ունեցել են ահռելի մասշտաբներ, երկու դեպքում ջարդերի նպատակը եղել է նշված ազգերի լիակատար ոչնչացումը: Բայց և այնպես սխալ կլինի ասել, թե հայոց և հրեական ցեղասպանությունները լիովին նույնական են: Գաղտնիք չէ, որ հրեական կոտորածն առավել սուր արձագանք է ստացել համաշխարհային մակարդակով, քան հայկականը: Ասենք ավելին. դեռևս մինչև հրեական եղեռնն աշխարհը գրեթե մոռացության էր մատնել 1915 թ. եղերական իրադարձությունները: Դրա մասին է խոսել նույնիսկ Ֆաշիստական Գերմանիայի առաջնորդ Ադոլֆ Հիտլերը. «Ի վերջո, ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին» [4, 5]: Միայն Երկրորդ աշխարհամարտից հետո և հատկապես վերջին քսան տարիների ընթացքում իրական պայքար սկսվեց Հայոց եղեռնի դատապարտման և համաշխարհային մակարդակով ճանաչել տալու ուղղությամբ: Եթե քաղաքական ու պետական գործիչները բարենպաստ քաղաքական իրավիճակի են սպասում՝ ցեղասպանության խնդիրը բարձրաձայնելու համար, ապա առաջավոր մտավորականները, մասնավորապես՝ գրողները, լինելով չափազանց դյուրազգաց մարդկային վշտի ու տառապանքի նկատմամբ և առաջնորդվելով բարոյական արժեքներով, պայքարում են հետադիմության և բարբարոսության դեմ անհապաղ՝ բնավ չսպասելով հարմար պատմաքաղաքական պահի: Նման գրողներից ավելորդ չէր լինի նշել Սոլ Սթայնի անունը: Սթայնի հետաքրքրությունը Հայոց եղեռնի նկատմամբ այնքան

մեծ էր, որ նա երեք երկ է գրել այդ թեմայով: Ամերիկացի գրողի վեպերի հերոսը հայազգի իրավաբան Թովմասն է, որի միջոցով էլ գրողը տալիս է կոտորածների բարոյական գնահատականը. «Մեղադրող կողմը, որը հայկական ծագում ունի, փաստաբանի իրավունք կստանա: Գուցեն փաստաբանն անկողմնակալ չէ, քանի որ այն ժողովուրդը, որն առաջինն էր քրիստոնեություն ընդունել, դարասկզբում այնպիսի բռնարարքների ենթարկվեց, որոնք միայն մեկ անուն ունեն՝ ազգասպանություն» [5, էջ 63]: Սուլ Սթայնը հայոց ցեղասպանությունն ուղղակիորեն չի անվանում մարդկության դեմ ուղղված հանցագործություն և, ի տարբերություն արդեն լուսաբանված հեղինակների, ցույց չի տալիս այն պատմական կապը, որն առկա է հայկական և մյուս բոլոր եղեռնագործությունների միջև, սակայն իր հերոսի միջոցով խստորեն դատապարտում է թուրքերի կատարած ոճիրը: Հիշարժան է, որ ամերիկացի գրողը հայոց ջարդերը չի դատապարտում լոկ մարդասիրական մղումներով: Նա անուղղակիորեն ցույց է տալիս, որ հայերն առաջադեմ ժողովուրդ են, և որ նրանց կորուստն զգալի վնաս է համաշխարհային քաղաքակրթությանը: Սուլ Սթայնը, անկասկած, չի սխալվում իր տեսակետի մեջ, քանի որ յուրաքանչյուր ազգի ոչնչացում՝ կորուստ է մեկ առանձին մշակույթի: Բայց եթե նույնիսկ որևէ ժողովուրդ չունի զարգացած մշակույթ, միևնույն է, նրա բնաջնջումն անընդունելի է՝ բարոյական առումով:

Հայոց ցեղասպանության հետևանքներին է անդրադարձել ականավոր արձակագիր Կուրտ Վոնեգուտը: Նա իր «Կապտամորուքը» վեպում ներկայացնում է Ռաբո Կարաբեկյան անունով մի ամերիկահայ նկարչի, որի հարազատները գոհ էին գնացել հայոց կոտորածներին: Ռաբոն տառապում է ցեղասպանության ծանր հիշողություններից: Նա հաճախ է մեկուսանում իր տան սենյակներից մեկում, որտեղ ոչ ոք երբևէ ոտք չէր դրել: Վեպի վերջում պարզվում է, որ այդ սենյակում գտնվում է նկարչի կտավներից մեկը, որի վրա նա պատկերել էր հայոց ջարդերը: Վոնեգուտի վեպը ցայտուն կերպով վկայում է այն մասին, որ նույնիսկ տասնամյակներն անգոր են ջնջելու ցեղասպանության հիշողությունը ու մեղմել դրանից առաջացած մորմոքը [6, էջ 106]: Նույն ճշմարտության մասին է խոսում նաև Էլիա Կազանն իր «Անատոլիացին» վեպում: Գրքի հերոսները՝ եղբայրներ Ֆերդինանդ և Արա Սարաֆյանները, հայ տարագրի տիպական կերպարներ են: Դեռևս մինչև 1915 թ. ցեղասպանությունը նրանք բնակություն էին հաստատել ԱՄՆ-ում, գորգագործական արհեստանոց հիմնել և մի մեծ վաճառատուն բացել: Սարաֆյան եղբայրները աշխարհի տարբեր մասերում խոշոր խանութներ բացեցին, մեծ նյութական կարողության տեր դարձան: Նրանք սկսեցին վայելել ամերիկյան հասարակության հարգանքը [7, էջ 205]: Թվում է, թե սովորական մահկանացուին այսքանից ավելի ոչինչ պետք չէ: Յուրաքանչյուր

մարդ երագում ու ձգտում է բարձր հասարակական դիրքի և նյութական մեծ կարողության: Սարաֆյան եղբայրներն ունեին այդ երկուսը, սակայն իրենց երջանիկ չէին զգում: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ: Թերևս սխալ չէր լինի ասել, որ Արա և Ֆերդինանդ Սարաֆյաններն իրենց ազգի ողբերգական անցյալի և առկա երերուն հոգեբանական կացության զոհերն էին: Ո՞րն է հայ պանդուխտին տիրած հոգեկան ճգնաժամի հաղթահարման ուղին: Անկասկած, հայոց եղեռնի ճանաչումը և դատապարտումը համաշխարհային հանրության բոլոր անդամների կողմից, ինչին և նպաստում է ցեղասպանության թեման լուսաբանած գրողների լուսավորչական և քարոզչական գործունեությունը:

Ներկայացված գրողներից բացի, հայոց ցեղասպանությանն են անդրադարձել Ջեյմս Բլավելը՝ «Ազնվական տոհմ», Ջոզեֆ Վամբաուն՝ «Սոխի դաշտեր», Իվան Գոուլդը՝ «Հիվանդ ընկերներ», Իվան Մորիսը՝ «Ազատության փողոց», Հերման Վուլը՝ «Երիտասարդ բազե», Սայրս Սուլցբերգերը՝ «Ատամ վաճառողը» երկերում:

ԱՄՆ-ի գրողները, հայոց ցեղասպանության բարոյաէթիկական ասպեկտից զատ, լուսաբանում են նաև եղեռնի հոգեբանական հետևանքները, որոնք ոչ պակաս կարևոր են և հիշարժան: Ինքնին հասկանալի է, որ ցանկացած ցեղասպանություն չափազանց խոր հետք է թողնում հանգամանքների կամ էլ ճակատագրի բերումով փրկված մարդկանց հոգեկանի մեջ: Ինչպես վկայում են ամերիկացի հեղինակները, կոտորածների հասցրած ծանր հոգեբանական հարվածն ի զորու չէ չեզոքացնելու նույնիսկ ժամանակը: Ավելին՝ որքան էլ տարօրինակ թվա, ցեղասպանությունից միայն որոշ ժամանակ անց են մարդիկ զգում դրա ողջ հրեշավորությունը և գիտակցում, որ դրա հետևանքով առաջացած վիշտն ու ցավը փոխանցվելու են սերնդից սերունդ:

**Եզրակացություն:** Ամերիկացի (ազգությամբ ոչ հայ) հեղինակներն իրենց ստեղծագործություններում անդրադարձան Հայոց ցեղասպանության թեմային՝ փորձելով մարդկությանը հեռու պահել հետագա մարդկային աննախադեպ չարիքից: Որպես կանոն, նրանք մանրակրկիտ չպատկերացրին հայոց եղեռնի հոգեբանական հետևանքները: Սրա պատճառն ակնհայտորեն այն է, որ նրանցից շատերն անմիջականորեն չէին վերապրել Հայոց ջարդերը և ո՛չ էլ հանդիսանում էին ցեղասպանության զոհերի հետնորդները: Այնուամենայնիվ, նրանք առնվազն հպանցիկ խոսում են եղեռնի զոհերի ժառանգների ճակատագրի, նրանց ծանր բարոյահոգեբանական վիճակի, ներքին հոգեկան ճգնաժամի մասին, որը շատ հաճախ անլուծելի է թվում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hovhannisian R.** The Armenian Genocide in Perspective.- Oxford, 1989.- 222 p.
2. **Hemingway E.** The Fifth Column and the First Forty-Nine Stories.- New York, 1938.- 597 p.
3. **Passos J.D.** Orient Expres.- New York, 1930.- 356 p.
4. **Lochner L.** What about Germany? -New York, Dodd, Mead & Co., 1942.- 406 p.
5. **Stein S.** Other People.- Harcourt Brace Jovanovich, 1980, Dell, 1981.- 259p.
6. **Vonnegut K.** Bluebeard, Paperback.– September 8, 1998.- 198 p.
7. **Kazan E.** The Anatolian, Grand Central Pub; First Warner Books Printing edition , - January 1, 1983.- 502p.

**Н.Б. ГАЛСТЯН**

### ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ АМЕРИКАНСКИХ ПИСАТЕЛЕЙ

Обсуждается тема Геноцида в произведениях американских писателей. Показано их отношение и протест против зла человечества.

**Ключевые слова:** геноцид, страдания, проблема, борьба, психическое состояние, свидетель, резня, память, сверхспособности, американский писатель.

**N.B. GALSTYAN**

### REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF AMERICAN WRITERS

The theme of Genocide in the works of American writers is considered. Their attitude and protest against that great evil are revealed.

**Keywords:** genocide, suffering, problem, struggle mental state, witness, massacre, memory, superpowers, American writer.